



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

7-13-2020

Դպրոցները բացելու վերաբերյալ գերատեսչի նորությունները. 7-13-2020

Կորոնավիրուսի համաճարակը շատ մեծ ազդեցություն է թողել բոլորիս վրա և ամեն ինչ փոփոխվում է ամեն րոպե:

Այսօր, նահանգապետը հայտարարեց, որ հաշվի առնելով ընթացիկ առողջապահական պայմանները, պետք է փակել լրացուցիչ հիմնարկություններ: Անցած մի քանի շաբաթների ընթացքում Կորոնավիրուսի վարակը ավելի շատ է տարածվել, քանի որ շատ հիմնարկություններ բացվեցին շատ շուտ: Մենք կշարունակենք որոշումներ կայացնել հիմնվելով գիտության և փաստերի վրա: Ինչպես դուք գիտեք, կրթական գրասենյակի անդամները, Բրբենքի ուսուցիչների ասոցիացիան (BTA), Կալիֆոռնիայի դպրոցների աշխատակիցների ասոցիացիա (CSEA), Բրբենքի ծնողների ուսուցիչների խորհրդի ասոցիացիան (BCPTA) և Բրբենքի դպրոցի ադմինիստրատորների ասոցիացիան (BASA) ամբողջ ամառվա ընթացքում, համագործակցել են իրար հետ դպրոցները բացելու կոմիտեի հետ մեկտեղ, թե ինչպես ապահով կերպ բացեն դպրոցները: Մենք հուսով էինք, որ կկարողանանք դպրոցները բացել հիբրիդ մոդելով և օրվա մի մասը աշակերտներն անձամբ հաճախեին դպրոց և մեկ այլ մոդելով՝ 100% հեռակա ուսուցման մոդելով: Մենք հարցադրել ենք ծնողներին և պատրաստվել այս առիթով: Մենք գիտակցում ենք, որ բոլորս էլ ցանկանում ենք, որ աշակերտներն անձամբ դպրոց հաճախեն, բայց ներկայիս առողջապահական տվյալները թույլ չեն տալիս անել այն:

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում, Լոս Անջելեսի գավառում շատացել է նոր հիվանդների թիվը: Քննության դրական պատասխան ստացողները կազմում են մոտավորապես 10%, որը շատ ավելի է աշխարհի առողջապահական կազմակերպության պահանջած 5%-ից, միայն որի դեպքում կարելի է ապահով կերպ բացել հասարակական վայրերը: Հուլիսի 12-ին, Լոս Անջելեսի հանրային առողջապահական գրասենյակը հաղորդել է, որ նոր հիվանդների թիվը կազմել է 3,332 հոգի: Մենք չենք կարող վտանգի տակ դնել մեր աշակերտների և աշխատակիցների առողջությունը ընթացիկ միջավայրում: **Դրա պատճառով, մենք որոշել ենք, որ օգոստոսի 17-ին, ԲԴՄԵ-ն դպրոցները բացի 100% հեռակա ուսուցման մոդելով:** Մենք կշարունակենք հետևել առողջապահական պայմաններին և հրահանգներին տարվա ընթացքում, և կտեղեկացնենք, թե երբ դպրոցները կբացվեն:

Մենք պատրաստվում էինք այս հնարավորության համար և պատրաստ ենք ուսումնական տարին սկսել 100% հեռակա ուսուցման մոդելով: Այն կներառնի ավանդական ուսուցում ուղիղ եթերի դասավանդման միջոցով, գնահատականներով և ներկա - բացակա կատարելով:

Դպրոցները հաշվի կառնեն նաև, թե ինչ գիտելիք չեն ստացել երեխաները և լրացուցիչ աջակցություն կցուցաբերեն: Մենք կշարունակենք հատուկ մանրամասներ հաղորդել ապագա մի քանի շաբաթների ընթացքում: Մենք անհամբերությամբ ենք սպասում դպրոցների բացմանը, որը հուսով ենք տեղի կունենա այս տարի, բայց մեզ լրացուցիչ օգնություն է հարկավոր նահանգային և դաշնային պետության կողմից այն ապահով կերպով իրականացնելու համար: Մենք պետք է հետևենք նաև գիտությանը, քանի որ այն կապված է վիրուսի հետ:

Անկեղծորեն,

Դոկտոր Արմոնդ Ադախանյան, ԲԴՄՇ-ի կրթական գրասենյակի նախագահ

Դոկտոր Մաթ Հիլլ, գերատեսուչ

Դայանա Աբաստա, Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի (BTA) նախագահ

Լուիս Այալա, Կալիֆոռնիայի դպրոցների աշխատակիցների ասոցիացիայի (CSEA) նախագահ

Դոկտոր Օսկար Մասիաս, Բրբենքի ադմինիստրատորների ասոցիացիայի (BASA) նախագահ

Վենդի Հարվել, Բրբենքի ծնողների ուսուցիչների խորհրդի ասոցիացիայի (BCPTA) նախագահ